

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

53^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ



ԹԻ 52



27 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շաբաթը (հաբազրական) Տ Ա. — Երբ հարս կըլլան... (Ոսանաւոր) ԲԻԴԱՆԹԵՄ, — Գիտական աշխարհէն. «Պիների եւ Լէյսէի ապափնաւանները». ԼԵՆԻՆ ԿԻՐԵՂՆԱՆ, — Այժմը Երուսաղէմի վրայ. ՈՒԽՏԱՒՈՐ — Տուայտանք (Սիրերգ) ՎԱՐԴԳԷՍ, — Աղջկան մը օրագիրէն — Բաղուած. ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ, — Բաւուալա Իվանովիչ (Վերջին մաս) ԲԻԶՈՒՆ ԼՕԴԻ. քարգմ. ՉԻՖԹԷ — ՍԱՐԱՅ, — Խաբազրական Նօթեր.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթերի սարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար Բաւուալա յիշուց յիշուց, կանխիկ վճարելի: Արտասահման Թ Զրանք կամ 5 Լուլլի: Թղթասարական ծախքը Խաբազրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկէն: ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն Խաբազրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայմաններով:

ՉԵՌՔԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در علیاده غلطاده (ماسيس) غرضی اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՄ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. Կառավարութեան ֆոնդօյին ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոհ ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուններէն զատ, Բարիզի՝ Օբէրա, Վոսվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Պօլի-Տրամաթիք եւ այլն թատրոնները, նաեւ Պօստոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատունները, Բիկմայիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիէռի, Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հալլ-Մարսիլիա նաւարկութեան, Ծովային Փոխադրութեանց, Ֆրանսական թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր Կազմական Կանոնագրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իր ելմտական կազութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական նախարարութեան քննութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւ այլն:

Ընկերութեան դրամատունն է Քրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances générales Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հաւցեք. — Պոլիս, Մահմուտ փաշա, Պէոյիւք Երլտըզ խան, Թիւ 14, Լա Գօնֆիանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող անքիֆաի վաճառատուն մը, Պոլիս, Շուկայ, Մուհաֆազաճըլար, Թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԻՄ

ՕՍՄԱՆԵԱՆ ՇԱՔԱՐԱՎՈՐԾ ԲԵՐԱՅԻ

Սոյն հանրածանօթ շաքարավաճառը՝ Բերայի շիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իրրեւ բաքիսքոի եւ թէ՛ իրրեւ շաքարավաճառ, աւելի գոհ ձգելու համար իր բաղմաթիւ յաճախորդները: Ամրան եղանակին մէջ, համեղ պաղպաղակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր:

ՀԱՅԻ ՍԱՐԻՄ Օսմ. շաքարագործը ճոխ մթերք մը ունի հարսանեկան շաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առթիւ ոչ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուներու մէջ:

Միակ մասնաճիւղ, Ղալաթիա. Թօփհըլար Ճատտէսի, Թ. 101:

29—30



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սունենայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՔԱՐԱՎԱՆ
ՄԱՍՆԱՎՈՐԾԻ ՄԵՐ

ԲԵՐԱ.

1. Մեծ փողոց, Պօն Մառշէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին.
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ.

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊԱԼԱՍ.

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյաղլա, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՐՏԱՐ

Զարչը Պոյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ Երաւասաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէր Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղուլուի տունը:

ԱՅՍ ԿԼԻՄԱՅԻ ՄԷՋ

Ընդհանուր վերաբերման որոնք այս աշխարհածանոթ ղեղով կատարելապես կը բժշկուին:



Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

19

SCOTT'S EMULSION

Հաշ, հարուստ, և բոլոր որկորի և թորի վերաբերինչպէս թորացաւ, և սրտնշիտ, շնչառութեան և կուրծքի երակներուն փոքրիկութեամբ և միւս տկարութիւնն պատճառող անհասկալիութիւններ՝ անմիջապէս կը զսպուին, և կը տկարացուին. և վերջապէս կը բժշկուին: Դամանաւանդ ծերական ակտի նկատմամբ՝ առաջին նշաններու տեսնուած ատեն, անմիջապէս առաջը կ'առնէ: Երկրորդականները մը մէջ այսպիսի աղետ մը կայ, պէտք չկարան մը դիմել և:

ԲԱՐԿՈՒԹԻ ԲԱՆԴԱՐՈՒԹԻՒՆ

մը առնել: Բարկութի Բանդարութիւնը այս աղետի կը դադարեցնէ և տան մէջ ուրախութիւնը կը վերականգնէ:

Բոլոր բեղաւորները և բեղաւորները իւր ձեռքին:

“AU COUSSIN D'OR”

ԱՐԵԻԵԼԵԱՆ ՈՍԿԵԹԵԼ ՈՒ ՄԵՏԱԲՍԱ
ՀԻՒՍ ԲԱՆՈՒՄԲՆԵՐՈՒ ճոխ հաւաքածոյ մը գտնել կարելի է՝ Բերա, Լիւքսեմպուրկի եւ Քլիւպի չէնքերուն միջեւ նոր բացուած իողոցը, Օ ԲՈՒՄԷՆ ՏՕՌ անունով նորահաստ փողբիկ սիրուն վաճառատան մէջ:
Կնոջական արդուզարդի և ընտանեկան նուէրներու յարմար, ինչպէս նաեւ սալօններու զարդարման յատուկ ճաշակաւոր գործուածքներու պէսպիսութիւն մը, — ամէնքն ալ ձեռքով բանուած ու դիւրամատու լեւի գիներով: Ապսպրանքներ կ'ընդունուին նաեւ մեծաքանակ պատրաստութեանց համար:
Կ'արժէ ԵՐԹԱԼ եւ ՏԵՍԵԼ տեղական արհեստագործութեան եւ մասնաւորապէս հայ աղջիկներու ձեռարուեստի այս գեղեցիկ արտադրութիւնները որոնք մեծապէս կը զօրահաստեն Եւրոպացիներէն:

ՉՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ ԳՈՒԼԵԱՆԻ Չինաստանէն, Հնդկաստանէն, Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած քարմ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, որոնք ձերան եղանակին յարմարագոյն ըմպելիներն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պանֆ Գափու, Ճէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



ԴԱՇՆԱԿԱՀԱՐ Երիտասարդ մը, որ Եւրոպայի մէջ ուսումնասիրութիւններ կատարած է, պատրաստակամութիւն ունի այցելութեամբ դասեր տալ դպրոցներու եւ տուներու մէջ: Պէտք ունեցողները կրնան դիմել Մասիսի խմբագրութեան:

ՄԱՍԻՆ

53^ր ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ



ԹԻՒ 52



27 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1903

ՇԱՐԱՐՈՒՄ

Ամանորի և Ծնունդի տօնին մերձաւորութիւնը, այս օրերուս մէջ նոր զարկ մը կուտայ հանրութեան բարեգործական զգացումներուն որոնց կոչում կ'ընէ Ա.զ.գ. Պատրիարքարանը, մասնաւորապէս «Յիսուս. Մանուկի նուէր»ին Կոնդակովը: Գաւառային աղքատիկ զպրօցներու, պատսպարաններու և արհեստանոցներու օգտին սահմանուած է այդ նուիրատուութիւնը որ տարակոյս չիկայ թէ այս տարի ալ իր արդիւնաւորութիւնը պիտի ունենայ: Տեսնուեցաւ արդէն թէ վերջացող տարուան մէջ, նիւթական շատ համեստ միջոցներով, որքանոց—արհեստարանները բաւական կազմակերպութիւն ստացան և անոնց մէջ ուսանող երկսեռ աշակերտները զգալի քայլ մը առին: Երգնկայի գորգաշինութեան արհեստանոցէն զրկուած գեղեցկահիւս գորգերուն յաջորդեց հատ մըն ալ, Սղերդէն զրկուած, որոնք Ս. Պատրիարք Հօր յանձնուած են իրրեւ նմոյշ և դրական ապացոյց տրուած աշխատանքին և եղած նպատակներուն արդիւնաւորմանը: Այս կերպով, Պատրիարքական Կոնդակը որ կ'ուղղուի բարեսէրներուն, գիտակից և նպատակայարմար օժանդակութեան մը հրաւերն է որ կը կարգայ, 1904 տարուան մէջ ալ ապահովելու համար արհեստական կրթութեան յարատեւութիւնը ու զարգացումը:

Հանրային բարեգործութեան շարքին մէջ յիշատակութեան արժանի է այն գեղեցիկ գաղափարը զոր յղացած են Ա.զ.գ. Հիւանդանոցի ինժամակալուհի Տիկինները՝ «Ծնունդի Ծառ»ի մը պատրաստութեան, պտուղներով ու նուէրներով բեռնաւորուած, Որբանոցի սաներուն բաշխուելու համար, Կաղանդին օրը: Անշուշտ Գալիլայեան Որբանոցի սանուհիներն ալ աւարկայ պիտի ըլլան այս տե-

ւակ մայրական հոգածութեան մը որ մոռցնէ իրենց ընտանեկուրկ ըլլալին:

Այն բացառիկ կարգադրութեան հակառակ որուն համաձայն՝ Կրօն. և Քաղ. Ժողովները պիտի գումարուէին շարթուս մէջ, օրակարգի խնդիրներով զբաղելու համար, Վարչական նիստ տեղի չունեցաւ: Երեքշաբթի օրը, Կրօն. Ժողովի ատենապետ Սրբազանը միայն, քանի մը եպիսկոպոսներու հետ Պատրիարքարանի մէջ խորհրդակցութիւն մը ունեցաւ եկեղեցական ծանօթ խնդրոյն վրայ, Ս. Պատրիարքին նախագահութեամբ: Իսկ յաջորդ օրը՝ թէև Սառն Ժողով հրաւիրուած էր՝ յատկապէս Երուսաղեմի գործերուն համար, բայց Ս. Պատրիարքը եւ Քաղ. Ժողովէն երեք անդամ միայն եկած էին Ղալաթիոյ Խորհրդարանը: Հետեւապէս Ծնունդի տօներէն ետքի կը մնայ վերջնական որոշումը պատուիրակներու ընտրութեան մասին: Եւ թերեւս լաւագոյն է այսպէս, որ մինչև այն ատեն Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հօր տրամադրութիւնն ալ կ'իմացուի բացորոյսապէս, թէ՛ Սառն Ժողովի եօթը ծանօթ որոշումներու մասին և թէ՛ Երէցեան Սրբազանի հրաժարմանը մասին՝ Երուսաղեմի Պատր. Փոխանորդութեան պաշտօնէն:

Մայր Աթոռի գործերուն վրայ կը շատանանք դարձեալ ամփոփել օրաթերթերու մէջ հրատարակուած կարեւորագոյն լուրերը, «Նայե Զրայե Բրէսէ»է արտատպուած հեռագիր մը հաստատեց ինչ որ գիտէինք արդէն. «Կովկասի Հայոց եկեղեցիները, զպրօցները ու բարեգործական հաստատութիւնները ռուս կառավարութեան վարչութեան տակ անցան, որ մերժեց այս պետական որոշումը ետ առ-

նել տալու համար էջմիածնի Կաթողիկոսին մատուցած խնդրանքը» : Թիֆլիզէն հասած Նորադոյն տեղեկութեան մը նայելով, Կաթողարութիւնն ինք սկսեւ է գանձել՝ դրաւ ուած եկեղեցական կալուածներուն ամսականները :

Ս. Հայրապետը ծանրապէս հիւանդ է :

Օտեսայէն «Սգանտարտ»ի ուղղուած հեռագիր մը հաղորդեց առաջին անգամ այս հիւանդութիւնը, և մեր օրաթերթերն ալ աւելցուցին թէ Ն. Ս. Օծութիւնը կաթուած ունի, թէ մահափերձ է, և այլն : Ս. Պատրիարքը, այս հրատարակութիւնները կարգաւոր, չորեքշաբթի առաւօտ փութաց հեռագրել էջմիածին, Ս. Հայրապետին որպիսութիւնը հարցնելու համար : Էջմիածնէն հասնելիք հեռագրական պատասխանը միայն պիտի բերէ որոշ տեղեկութիւն մը որուն կը սպտսուի ժամէ ժամ :

Առ այժմ, Թիֆլիզի թղթաբերը սա մանրամասնութիւնը միայն բերած է ղեկտ. 13 թուականով, թէ Ս. Հայրապետը տկարութեան պատճառաւ Ալէքսանտրաբոլ եկած է դարմանուելու, և Թիֆլիզէն երեք բժիշկ հոն դացիր են, որովհետեւ էջմիածնի մնացուն բժիշկը վեց ամսուան արձակուրդով եւրոպա կը գտնուի :

Սիսէն հասած լուրերու նայելով, Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը ձեռնարկեւ է նորոգելու Մայրաւանքին՝ փլատակ ու խարխուլ մասերը, սկսելով նախ «Ղարապա» կոչուած սրահէն զոր առժամեայ ժառանգաւորաց վարժարանի մը վերածել կուտայ ուր պիտի կրնան բնակիլ ու դաստիարակուիլ 40ի չափ սաներ : Իր արամադրութեան ներքեւ գըտնուած նիւթական հաճեաւ միջոցներով՝ աւելին էէր կրնար ընել Ն. Սրբազնութիւնը որ իրաւունք ունի տնկալելու որ կրթասէր ու եկեղեցասէր հարուստներ գիւրութիւն ընծայեն իրեն՝ ընդարձակ սահմանի մը մէջ իրագործելու ժառանգաւորաց վարժարանի մը հաստատութիւնը որ համապատասխանէ Արմաշի Դպրեւանքին : Կրթական գործի մասին ընդհանուր կերպով գոհացուցիչ են Կիլիկիոյ զանազան քաղաքներէն հասած տեղեկութիւնները. հոգաբարձութիւնները կաղմուած և լաւ ուսուցիչներ ընտրուած : Ատա-

նայի դպրոցները, մասնաւորապէս, լաւ ուղղութեան մը մէջ կը գտնուին այս տարի, երկու աշակերտներուն թիւը ըլլալով 1400, ուսուցիչներունը՝ 40 և տարեկան պիւտճէն 800 օսմ. ոսկի : Նոյնպէս Մէքսիկի երկու դպրոցը, իր լաւագոյն տարրերէ բաղկացած Հոգաբարձութեան ջանքերուն շնորհիւ, Կաթողարութիւնը մէջ կը գտնուի : Կրթական գործը, այս ընթացքով, զգալի յառաջդիմութիւն մը կը խոստանայ յառաջիկայ տարուան համար՝ Կիլիկիոյ մէջ, որուն նըպաստած են որքան իւրաքանչիւր քաղաքի կրթասէրներու անձնուէր աշխատութիւնները՝ նոյնքան ալ Տ. Սահակ Ս. Կաթողիկոսին ազդու յորդորները ու հոգածութիւնը :

Տ. Ա.

ՏՈՐԱՅՏԱՆԷ

(ՍԻՐԵՐԳ)

Յօյուր ցաւերու՝ դառն ու դժմոյակ. Զուգեցի բզկեղ մասնակից ընել. Մոյրուած՝ սիրոյ բաւիղին անել Ուղիներուն մեջ. քաղցի միմակ :

Զուգեցի որ եւ սրբիկ հրեշտակի ճմրւի կեանքի պատճառներուն տակ. Զուգեցի որ եւ հսկասդ քաղցի, Տառապանքով ծանր՝ ունայնիմ հակի...

Ոսին վրային վարդենույն չնաղ. Փուերը մեկդի քի խրնամով, — վարդեր բեզի՝ վարդ վարդին եւ — Լոկ փուերն ինծի մընացին, աւաղ :

Ան, դուն մի՛ գիտար բքնաւ քերդին Կսկիծն հոգեմաւ ու տուայանք սին. Թո՛ղ ան միտ մութին նայի՝ դուն յոյսին, Թո՛ղ անոր նայուածքն յառի միտ հողին :

Դուն երկիքն նայե, իսկ ես՝ անգունդին. Դուն միտ վեր նայե, ես միտ դեպի վար. Վայելքն ա՛լ հրապոյր չունի ինձ համար, Սիրքս դառնութեան անձաւ մ'ե մրքին :

Դառն ու դժմոյակ՝ բոյուր ցաւերու Զուգեցի բզկեղ մասնակից ընել. Մոյրուած սիրոյ բաւիղին անել Զավեաններուն մեջ. կը քալեմ անյոյս...

ՎԱՐԳՎԷՍ

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

ԱՊԱՔԻՆԱՐԱՆ

(SANATORIUM)

Դ.

Ապաֆինարանի մը շէնքին մանրամասնութիւնները — Պիլնեյի (Bligny) եւ Լէյսին (Ley-sin) ապաֆինարաններուն շէնքին եւ տեղւոյն նկարագրութիւնները :

Ֆրանսական կառավարութիւնը 1902 մայիս 12ի հրովարտակով Բարիզի ժողովրդական ապաքինարանները հասարակաց օգտին ծառայող հաստատութիւններ ըլլալնին ճանչցած է. այնպէս որ այդ շինութեանց համար օր ըստ օրէ կը տեղան նուիրատուութիւններ, կտակներ : Այս բարեգործութեան մասնակցող անձանց անունները չէնքին հիւրասնեակին մէջ արձանագրուած են որպէսզի անմոռանալի մնան : Քանզի մարդկային ցեղին պահպանման նպատակաւ եղած նուիրատուութիւն մը ամէնէն գովելի բարեգործութիւնն է :

* *

Պիլնեյի ապաքինարանը որ Բարիզի շրջակայքը կը գտնուի, ֆրանսական ոտանիւն առաջին այս տեսակ կատարեալ հաստատութիւնն է, 125 անկողին պարունակող մեծ շէնք մը, որու ընդհանուր ծախքերուն համար—հողը և շինութիւնը միասին—տասնը հինգ հազար գաղչ. ոսկի ծախս եղած է : Շինութեան յատակագիծը Գերմանիոյ Ֆալքենշթայնի և Ֆրանսայի Ամէնգուռի և Հոթ-Վիլի շէնքերուն նմանողութիւնը կը բերէ : Անշուշտ, Պիլնեյի ապաքինարանը միւսներուն վրայ առաւելութիւններ պիտի ունենայ, քանի որ կաղմակերպողները, օտար հաստատութիւններ ամէնքն ալ, այցելելէն յետոյ ձեռնարկած ըլլալու են, ջանալով զանկաօթտել ամենավերջին նորութիւններով :

Դարմանարանը (galerie de cure) չէնքին էեդրոնը կը գրաւէ և հիւանդներուն յատկացեալ սենեակները անոր երկու թեւերը

կը կաղմն, բայց ոչ ուղիղ դժի վրայ՝ այլ տրասլիդաձև : Այս նոր կարգադրութիւնը թէպէտ ունի իր անպատեհութիւնը, քանզի ծառայութեան համար դիւրութիւն չընծայեր, բայց առաւելութիւններն ալ նշանակելի են. քանզի առանց դոց գաւթի դրութեան հետեւելով, այս երկու թեւերը դարմանարանը հիւսիսային ցրտաշունչ հովերուն դէմ կը պատսպարեն, թոյլատրելով որ աւելի մեղմ հովեր անոր չորս բոլորը չըջնին : Արեւը շարունակ հոս կ'այցելէ. և իր ջերմութիւնը ամենեւին չի կորսուիր, նոյն իսկ ձմեռուան եղանակին : Ճաշարանը լուսաւոր և օդաւէտ է : Սպասի և վարչութեան յատկացեալ տեղ ունանքը ապաքինարանին հիւսիսակողմը շինուած են և քիչ հեռուն կան ձիերու ակումը, կառատունը, մթերանոցները : Մօտակայ ակունքէ մը առատօրէն ջուր է բերուած խողովակներով, այնպէս որ օրական մարդ գըլու 1000 լիդր ջուր կրնան գործածել :

Առողջապահութեան կարեւոր տարրը ջուրն է :

Ննջասնեակները ընդարձակ և բարձր արեւմուտքին կողմը կը նային երկու բարձր պատուհաններով, որոնց վերի մասը շարժուն է սենեկին օդը հողմահարելու նպատակաւ : Շէնքին ամէն անկիւնները կտրցած, գետինը ciment arméով շինուած, դէպի պատուհանը հակ, որպէս զի հիւանդին մեկնելէն վերջը, նախ ծածքը լուալու նման չորս կողմը մաքրուի առատ ջուրով և հականելուի :

Ննջասնեակները վեցական անկողնոց դրութիւնը զանց ընելով՝ երեքական անկողնով, երկերկու սենեակէ կաղմուած են՝ միջնորմէ զատուած : Այս կերպով հսկողութիւնը կը ղրկրիննայ, առանց նաեւ վեց հոգի միեւնոյն տեղը խճողելու : Զերմացնելու և լուսաւորութեան յատուկ խողովակները չէնքին կից, դուրսէն կը դործեն, միակ զոնակով մը սենեակներուն հետ հաղորդակցութիւն ունենալով : Դալով կեդրոնական դարմանարանին (galerie de cure), դէպ ի հարաւ դարձած, մէկ կողմը բոլորովին բաց է, սենեակներով զարդարուած և իր ամբողջ երկայնութեամբ պատշգամ մը : Պիլնեյի ա-

պաքինարանին սրահին լայնքը հիւանդաց ա-
թոռներէն ինչուան սիւնները 3մ.80 է, որպէս
զի հիւանդները անցուդարձէն չի նեղուին,
քանզի սրահը 60 հոգի կրնայ պարունակել:

Ժողովրդային ապաքինարաններու մէջ
այս լայնութիւնը չափազանց ըլլալով՝ ինչուան
2 մեդրոյի կրնայ վերածուիլ, որպէս զի ա-
րեւելեան ճառագայթները ինչուան հիւան-
դին ընկողմանած տեղը հասնին, և բուն իսկ
մի միայն կուրծքին վրայ. և այս նպատակին
համար, սիւնէ սիւն շարժուն վարագոյրներ
կախուած են արեւուն լոյսին ուղղութիւնը
կանոնաւորելու և միեւնոյն ժամանակ չափա-
ւորելու համար, քանզի ամառուան եղանա-
կին կիզիչ և անտանելի կը դառնայ: Ամբողջ
ապաքինարանը ծաղկաւէտ բուստտանէ մը
չըջատուած է. դալարագեղ վայրեր, կա-
նանչադարձ սաղարթացեալ ծառերու պու-
րակներուն հրապուրիչ շուքը՝ կը հրաւիրեն
հիւանդ այցելողը վայրկեան մը մոռնալ ա-
րեւը, իր տածողական դարմանումը ու դե-
ղագիրները, և երթալ իրենց զովարար շու-
քին մէջ դալարին վրայ ընկողմանելու, և բը-
նութեան ծոցին խորը թաղելու իրենց բոլոր
մտայլ ու տխուր խորհրդածութիւնները:

Գալով Լէյսինի ապաքինարանին, ասոր
գիրքն ու կլիմայական պայմանները բոլորու-
մին տարբեր են:

Թէպէտեւ Զուիցերիա առատ է գեղեցկա-
ղիրք վայրերով, բայց ինչ որ կը տեսնուի,
Լէյսինը՝ իր բնական գիրքով հելուետական
երկրին ամէն մոգական գեղեցկութիւններով
օժտուած տեղ մը ըլլալու է: Բուն չէնքը,
Ֆէյտէյ դարաւանդին վրայ 1450 մեթր բարձ-
րութեան վրայ կառուցուած է: Տեղը չոր,
ուր արեւը առաւօտէն ինչուան երեկոյ մէջն
է, և խիտ անտառ մը զինքը ցորտէն կը
պաշտպանէ:

Զորերու հետ համեմատելով, բարձրաւան-
դակներուն ունեցած առաւելութիւնը այն է
որ, երբ ասոնց գիրքը արեւելք—արեւմուտի
կողմն ինկնայ, արեւը նախ և առաջ կ'եր-
եւայ և ամէնէն վերջը մարը կը մոնայ: Ի-
րիկունները և գիշերները նուազ դով կ'ըլ-

լան. քանզի ցրտացած օդը, որ լերանց կո-
ղերը քերելով վար կ'իջնայ, բարձրաւան-
դակին վրայ կանկ չառնելով կը շարունակէ
իր վարէջքը և կը սահի կ'իջնայ հովիտներու
մէջ տարածուելու, ուր կը մնայ անշարժ:
Այս պատճառաւ բարձր տեղուանքը հիւսիսէն
դէպ ի հարաւ բնական փոքր շեղութիւն մը
ունենալու են:

Լէյսինի չէնքին ետին 2000 մեթր բարձ-
րացած բնական պարիսպ մը Վայ կանդնած:
Այսինքն լեռնաշղթաներուն մասերն են, սպի-
տակ գլխով երկնից կապոյտին վրայ ցցուած,
ցրտաշունչ հովերը կ'արգիլեն. և այս իրր թէ
բաւական չըլլար, չէնքին մօտը, դարաւոր
մայրիներու անտառ մը կ'ընդլայնի խիտ շու-
քով և կանանչութեամբ, ուրիշ հովը կարելի
չէ որ թափանցնի:

Մայրիները, իրենց խիտ և ինչուան գե-
տին իջնող մշտադալար ճիւղերով հովին դէմ
դիմադրող, լաւագոյն բնական պատուարը
կը կազմեն. եւս առաւել որ այդ անտառ-
ներուն օդը ամխածինով խտացած է եւ երբ
դարնանամուտին ծաղկին, անուշահոտ կը
բուրեն:

Լէյսինի ապաքինարանը 5 յարկով 110
անկողին պարունակող չէնք մըն է: Առաջին
յարկին վրայ կը գտնուին ճաշարանը, հիւ-
րասենեակը, կանանց համար մասնաւոր սեն-
եակ մը, ընթերցարան, գնդամուղի խաղին
յատկացեալ սրահ մը, ձմեռնային պարտէզ,
ձմեռարան եւն... այսինքն այն ամէն պի-
տոյքները, որոնք ռովորաբար հարուստ տան-
դակի մը կարեւոր մասը կը կազմեն:

Սենեակներուն փոքրագոյնը 50 խորա-
նարդ մեդր օդ կը պարունակէ, որոնք պար-
զութեամբ կահաւորուած, ո'չ վարագոյր ու-
նին եւ ո'չ ալ ասեղնադործի ձեռակերտներ.
ամէն ինչ՝ կարասիներէն սիսեալ՝ կրնան լու-
ացուիլ եւ հականեխուիլ: Սենեակին անկիւն-
ները կլոր, որպէս զի փոշին հոն չի նստի,
պատերը իւղանքիկուած, ուղած ժափանակ-
նին լուալու համար: Սովորաբար գետինը
թաց լաթով կը սրբեն, փոշի չի յարուցանե-
լու համար: Հիւանդը մեկնելուն պէս, սեն-
եակը ամբողջովին կը հականեխուի:

Չէ՛ բաւական որ հիւանդները հանապազ իրենց վրան Տէթվէյլերի թքամաններ կը կրեն, այլ ձեմարաններուն եւ անցքերուն մէջ՝ տեղ տեղ զետեղուած կան նաեւ հակա- նեխիչ նիւթով լեցուն թքամաններ, որոնց մաքրութեանը համար մասնաւոր ծառայ մը սահմանուած է:

Առողջապահական այս մանրամասնու- թիւնները անհրաժեշտ եւ կարեւոր են, քան- ղի այս զգուշութիւններուն շնորհիւ է որ արտը ո՛չ ծառաներուն կը փոխանցի եւ ո՛չ ալ հիւանդին ազգականներուն, որոնք ան- վըտանգ կրնան միեւնոյն հաստատութեան մէջ հիւանդներուն հետ կենակցիլ: Կեդրոնական ջերմարան մը — *vapeur à basse pression* — չորս կողմը կը տարածուի: Իւրաքանչիւր սենեակ իր շոգիէ կրակարանը ունի եւ մա- քուր օդը ուղղակի դրսէն ասոր քովը բաց- ուած ծակէ մը ներս կը մտնայ:

Հողմահարութիւնը երեք միջոցով կը կա- տարուի. առաջին՝ դուրսէն եկած օդով, երկ- րորդ՝ հողմահարութիւնը շարժման դնող խո- ղովակով, եւ երրորդ՝ պատուհաններուն վերի մասին բացուելովը:

Գարմանասրահը 30 մետր երկայնութեամբ 4,20 լայնութիւն ունի, ուր առաւօտէն սկըս- եալ, դարմանող բժշկին հրահանգին համե- մատ որոշեալ ժամանակ մը հիւանդները թիկնաթոռներու վրայ ընկողմնած հանգիստ կ'առնեն: Գրասեղաննին քովերնին, կրնան կարգալ, գծագրել, խաղալ եւ երբեմն իրիկ- ուան ժամերուն դարմանասրահը ուրախ եւ ոգեւորեալ միջավայր մը կը դառնայ ուր մարդ ամենեւին չի մտաբերեր իսկ թէ հի-ւանդաց ընկերութեան մէջ կը գտնուի:

Հոգարարձութիւնը ասկէ զատ ապաքի- նարանին շուրջը, գեղեցիկ տեղերու վրայ, միայրակ, գետնէն մետր մը բարձր փայտա- չէն տեղեր (*sun-box*) չինել տուած է—փոքր Ասիոյ մէջ սեռանգիւր ըսուած ցիցերու վրայ չինութեանց նման — ուր հիւանդները իրենց սովորական շրջագայութենէն յետոյ կուգան հանգչելու:

Լէյսինի ապաքինարանը նկարագրող գըր- ղոյկին մէջ տպուած պատկերներէն կ'ենթադ-

րուի գիրքին տեղագրական գեղեցկութիւնը: Շէնքին առջեւ գտնուած ընդարձակ ծաղկա-ւէտ կանանչութենէն անդին կը պարզուի հիւանալի տեսարան մը խորտուրտ եւ այլափո- փոխ: Հիւանդին նայուածքը, հորիզոնին յա- տակին վրայ կրնայ շարունակ շրջիլ առանց յոգնելու: Այժմ այդ լայնածաւալ հեռանկա- րին խորը ամէն օր նորանոր տեղեր կը նըշ- մարէ: Լեռանց կողերուն վրայ մութ կանաչ պատմուճաններ տարածուած, ուր տեղ տեղ, թեւատարած արծիւներու նման, հացիներու եւ եղեւիններու մէջէն երեւան կ'ելլան գոյ- նըղգոյն շալէներ, գեղջական ցած կամ բարձր շինութիւններ, տանիքնին սրածայր, որպէս զի ինկած ձիւնը կանգ չառնելով չի դիզուի եւ շուտ վար սահի:

Բլուրներու եւ բլրակներու շղթայներ կ'ա- հակաձև կը հեռանան, ձորեր եւ ծործորներ իրար դուռ կը բանան կանանչութեան մէ- ջէն, ուր աղմկալից հեղեղամաներ թաւալ- գլոր կը թափին գահալէժ, կը խաղան փըրփ- րալից: Հազարումէկ մանրամասնութիւններ են որոնք հորիզոնին մոխրագոյն գոլորշիներ- լուն մէջ կը ձուլուին. հեռուն, ուրուական- ներու նման երկնից կապոյտին վրայ կը գըծ- ուին բարձրակատար լեռնագագաթներ, մըշ- տատու ձիւներու տակ թաղուած: Մօն Պլանը արեգական արեւածայրներուն առաջին եւ վերջին բարեւը կուտայ: Տձեւ եւ վիթխարի ժայռեր կը ցցուին կէս սպիտակ կէս գորշա- գոյն, որոնց կողին վրայ յամրաքայլ կը շար- փի խտացած ձիւնը, դարերէ ի վեր դիզուած ու քարացած, մինչ սպիտակ փալիւլումներ, ճերմակ ամպերու մէջէն կը ցլան լեռնա- չըղթայներուն հինաւուրց գլուխները արտա- խուրելով:

Վարը, հովտին մէջ գետի մը արծաթա- փայլ հետքը, մանուածաւալ եւ օձապտոյտ կը գալարի գեղազուարճ մարմանդին մէջ, ուր ձիւնի հալած տեղումնքէն դուրս կը ցայտէ գեռաբոյս կանանչութեան մը դալարագեղ գունաւորումը: Այս լուի բնութեան մէջ պարարտ կովերու խումբեր, արածող երա- մակներ կը նշմարուին աստ անդ. եւ մերթ երկայն բառաչ մը ու կամ ջրոժոժներու հե-

ուսուր զօղանջը հովանիս խորը կը հնչէ խոր-
հըրդաւոր արծաղանգով սարէ սար:

Երբ իրիկուն ըլլայ, արեւուն հրաւառ
վերջածայրերէն լուսաւորուած Ալպեանց
ծոցին մէջ համառօտիւ լուսթիւն մըն է որ
կը տիրէ ամենուրեք, գիւղին հին եկեղեց-
ւոյն զանգակին ձայնը միայն կը լսուի որ Ave
Maria կը հնչեցնէ միօրինակ և վսեմ:

Այս գունակ հորիզոնը գորշագոյն գոլորչիով
թանձրացած, կը նսեմանայ, ուր՝ ճերմակ մու-
խեր ծայր կուտան, կ'երկարին չալէներու
վրայէն. կարծես գիշերապահ հսկայներ են որ
ծխամորճնին կը միան անձայն և անշունջ:
Եւ այդ ձիւնապատ բարձանց սուր օղին մէջ
թաղուած, բնութեան հրապոյրներուն հմայ-
քով հոգեզմայլ հիւանդը պիտի երազէ իր
հայրենի բնակարանին գորովն ու խանդա-
ղատանքը և շուտախոյթ վերադարձ մը
կեանքին քաղցրագոյն հրճուանքներուն:

Բերա ԼՆԻՈՆ ԿԻՒՐԵՂԵԱՆ

Երուսաղեմի Առաքելական Աթոռին ան-
նախմուծեանը առթիւ, որ այս երեքշաբթի
օր եկեղեցական աւանդական հանդէսներով
կատարուած է Ս. Յակոբայ տաճարին և
վանքին մէջ, կ'արտատպենք էջ մը «Ուխ-
տաւոր»-ի «Ալէլուիա յերուսաղէմ» գեղեցիկ
հատորէն: Այս տեսակ գրուածքներ հոգեկան
յափշտակութիւն մը կը պատճառեն ընթեր-
ցողին և զայն մտովի կը փոխադրեն Սիօնի
բարձանց նուիրական ուխտատեղիները, պահ
մը մոռցնել տալով միաբանական ծանօթ
վէճերն ու խնդիրները: Մաղթենք որ մին-
չեւ յաջորդ տարի, այս տօնին օրը, հար-
թուած՝ վերջացած ըլլան այդ խնդիրները,
Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հօր իմաստուն
հովանաւորութեանը ներքեւ և Ազգ. Կեդր.
Վարչութեան կողմէ ընծայուած աջակցու-
թեան շնորհիւ:—

ԱԶԲ ՄԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՎՐԱՅ

Իրրեւ քաղաք պատմական և սրբարան
կրօնքի՝ 1900 տարիէ ի վեր երուսաղէմ ու-
նեցած է բացարձակ կարեւորութիւն մը ուխ-
տաւորներու, եկեղեցականներու, Ս. Գիրքն

ուսումնասիրողներու և զբօսաշրջիկներու հա-
մար, կարեւորութիւն մը թերեւս Աթէնքէն
ու Հռոմէն աւելի:

Հնախօսարար՝ Ժամանակակից հին Ասո-
րական և Եգիպտական ահագին շէնքերուն և
վիթխարի Թէփէին Մեմփիսին՝ անոնց իբր
հետախաղաղ աներեւութանալուն և իր այն-
քան կրկնաւ յեղունակներուն վրայ ցայսօր
կանգուն մնալն՝ հրաշք մըն է բազմադէմ,
զոր Ս. Գիրքով միայն հնար է մեկնել: Այդ
մեծ Գիրքին հետ՝ իր աղէտներէն ու ան-
կումներէն զինքն անդադար յարուցանելու
փիւնիկ ոյժ մը կը արօփէ հոն՝ Յուդայի և
Բեռլամբնի երկիրին այդ սիրտ կեդրոնին
վրայ, յոր կը կեդրոնանան նաև մարդարէա-
կան ու անօրինակոն բոլոր շառաւիղները:

Սակայն՝ Բաբելոնի Նինուէի Բաղանէի և
միւս նախնական քաղաքներուն դարակից
այս քաղաքը բաղմայեղ ցարդ կանգուն պա-
հելու համար՝ որչափ ճիգ գերբնական ու
գերմարդկային. կարդացէ՛ք իր պատմու-
թիւններն և կը խելամաղի՛ք այդ անընկճելի
ճիգին հատու շահատակութեանց, և քաղաք-
ներու բնական ու վերջնական ճակատադիրին.
Բաբելոնէն, Նինուէէն, Պաալպէքէն մինչև
Թէփէ, Մեմփիս եւլն. և անկէ մինչև Իլիոն
և Կարքեդոն:

Ի՛նչ ոյժ և հանճար ալ տրուի՛ք քաղաք-
ներու կեդրոններուն և միջնաբերդներուն
մէջ՝ անոնք չե՛ն կրնար յաղթել համաշխար-
հական բնաչափ հարկին. բնութիւնն ի սկզ-
բանէ չէ՛ սիրած քաղաքները. զայս ցուցը-
նելու համար՝ մե՛նք ալ պիտի ունենանք
մէկէ աւելի առիթներ:

Ասիուդի մօտ Թէլ-էլ Ամարնայի մէջ նոր
գտնուած բեւեռական արձանագրութիւնք
կը յայտնեն՝ թէ Երուսաղէմ Քրիստոսէ 1400
տարի առաջ կարեւոր քաղաքն էր Քանանի,
որ եգիպտական դաւառ մըն էր՝ փարաւոն-
եան մեծ պետութեան ներքեւ: Անտի ցայսօր
33 դարու մէջ՝ անցնելով 33ի չափ յեղուած-
ներէ՝ հասած է մեզի արդի միջակ միջնադ-
դային վիճակովը: Իր ամէնէն փայլուն չըր-
ջանն եղած է Դաւիթի եւ Սողոմոնի ժամա-
նակը:

Իր բարձր ու լերանցամէջ դիրքին, իր

շուրջը մօրացեալ ջուրեր և տունկեր չգրտանուելուն պատճառով՝ ունի չոր և ըստ բաւականին առողջ կլիմայ մը:

Սիրոն, Ագրա, Մորիա և Պէշէթա բլուրները կը բաղկացունեն Երուսաղէմի զբլիսաւոր թաղերը պատմական. Սիրոն՝ մեծ մասով Հայոց թաղ մըն է, որուն արեւելակողմն է հրէաթաղն և հիւսիսակողմը՝ քրիստոնէից թաղը. Ագրա և Պէշէթա՝ կը կաղմեն մահմետականաց թաղը, իսկ Մորիա՝ բովանդակապէս վայրն է հին տաճարին՝ այժմ իրրեւ նշանակելի կառոյց ունենալով իր մէջ մեծ էօմէրի և Էլ-Ագսայի մզկիթները: Հայոց թաղը բարձր է. հրէաթաղը, ուր կան նաեւ երկու մեծ սինաւօն՝ բաղձօք աղքատին ու խճողեալ տնակներով՝ ունի տխուր երեւոյթ մը. քրիստոնէից թաղը՝ կը փայլի շէն մաքրութեամբ մը, զոր եւ օրօրի կը դեղեցկացունեն եւրոպական ոճով նոր շէնքեր. Մահմետականաց թաղն՝ ունի հետաքրքրական անհարթութիւն և շէն ու յարդարուն մաքրութիւն մը, զոր ա'լ աւելի կը շէնցունէ բիւզանդեան ձեւով շուկայ մը. իսկ Մորիայի հրապարակը՝ կը պահակերէ, պատմական հնարաւոր հաւատարմութեամբ մը, Սողոմոնեան տաճարը:

Սիրոնի բարձր երդիքէն՝ չոր տեսք մը կընծայեն այս թաղերը, որոնց վրայ Հնովանաւորներ տերեւ մը կանաչ. պատշգամ մը զուարթ, որոնց միօրինակութիւնը չբարեխառներ աչքի զարնող երա՛նդ մը կենդանի, ըլլայ թող ամէնէն նուազն եօթը դոյ՛ն երէն. թանձր պարիսպ մը՝ կերտուած քառակուսի մեծ քարերէ՝ երկայն ու շուրջ-քառակուսի չրջանակով մը կ'ամփոփէ եւ միաձոյլ կը քաղաքացունէ այս չորս մասերն այլասեր, որոնց վրայ փառաւոր պերճութեամբ կը խորոխտան էօմէրի մզկիթին մեծփոր դմբէթը. Ս. Գերեզմանի տիպար Գմբէթին թաքթաքուն ուռոյցքը, և ասոնց հակադիր անփառունակ բարձրութեամբ մը կը նային երկու սինաւօններուն կարմիր ու կանաչ գմբէթները լայն, Ասոնցմէ՛ զատ բուն քաղաքին մէջ չիկայ կարկառուն կերտուած մը, որ թռիչք տայ պարսպամէջի տափ քարուկիրներուն:

Եւ ինք քաղաքն Երուսաղէմ՝ ամբողջ կառուցուած է «ի սկզբանէ» ամրալէմ տափակ քարալեռներու վրայ, որոնց խորերն ու երակները կը քննուին ամէն տարի եւրոպացի ու ամերիկացի գիտուններու քրտինքովն ու ոսկիրով: Դաւթեան ու հռոմէական պարիսպներու քանի մը հասուածներ գտնուած են այսպէս նոր քաղաքին ներքեւը, զի այժմու Երուսաղէմին տակ միւս Սաղէմ մը թաղուած զօղած է անքննաբար, ու երկայնաձիգ գետնուղիներ կ'աւանդուի թէ կան եւ կը մնան պեղուած ի հին դարուց անտի, ինչպէս ուրիշ գետնափոր ճամբաներն հին: Այդ գետնուղիները՝ բնապիտական բաւական պատճառներ մը կը համարուին երկրաշարժներու անզօրութեանը սուրբ այս քաղաքին հանդէպ եւ այս լեռնային ու հրաբխային նահանգին մէջ:

Երուսաղէմը պարիսպէն ներս՝ բացի Ս. Յակոբեանց մայրերէն՝ գրեթէ բնաւ ծառ չիկայ, իսկ շուրջն եւ Համբարձուի լեռան ստորոտները կան ձիթենեաց խումբեր եւ անտառներ՝ մինչեւ 7—800 տարուան, Արեւմտեան հիւսիսային կողմը կայ բաւական ընդարձակ ձիթատան մը, որ ստացուածք է յոյն Եկեղեցիին եւ որ միակն է գրեթէ հոս, որ կը ներշնչէ հանգարտ ու խոկուն բանաստեղծութիւն: Իսկ բացաստանները՝ շատ կան նոյն իսկ ժայռերու եւ ագահեալ հողէ անձուններու վրայ զարմանալի մեծութիւնն եւ առատութիւնն այդ ծառերուն՝ սովորական հրաշք մըն է հոս Պաղեստինի մէջ եւ շրջակայքը Ս. քաղաքին, որ կը կրէ իբր 4000 տարիէ ի վեր խաղաղութեան երանաւէտ անունն Երուսաղէմ: Խաղաղութեան սուրիչ ինքն Աստուած եւ բնութիւնը՝ տալով հոս այդ ծառին՝ քարերու վրայ եւ ծովէն հեռու հալաքնականի պէս հրաշք աճում մը՝ թուի հաստատել ուզած են հին հեթանոս աշխարհին իմաստութեան, ձիթենիին ընծայած խաղաղանիշ նուիրագործումը՝ ներդաշնակելով զայն Յերուսաղեոց Սաղիմին մարդկութեան կողմէն արուած խաղաղ անունին հետ, կամ իրենք հեթանոս հելլէններն ու լատիններն հինաւուրց այս արմատ աշխարհէն փոխ ա-

ուած են այդ նուիրադործումը, որ կակնարկուի հին քաղաքակրթութեանց մէջ Աթէնքէն, Աթենասէն, էլէաէն մինչեւ Ենէաս Հռոմ ու Վիրգիլ մեծ քերթողն է՝ որ կերգէ խաղաղութեան յաղթանակը սա խաղաղական տողով «Զլթենեա՛ւ պսակաւոր ճեմի՛ անդ ճոխ խաղաղութիւն»։ Եւ իրա՛ւ, մայր-երկիրը բերքո՛վն ալ, գոյնո՛վն ալ, անթառամութեամբ ալ՝ ձիթենիին պէս լոյծ առատ խաղաղ եւ պիտանի տուրք մը չունի, ինչպէս որ հայր-երկինքը չէ՛ չնորհած իմաստուն մարդերու՝ խաղաղութեան նման դիւր ճոխ եւ կարեւոր պարգեւ մը։

Ս. Յակոբեանց մեծ վանքը՝ կը գրաւէ, իր կցորդներովն եւ չուրջ գետիններով, պարսպէն ներս բաւական մեծ մաս մը սուրբ քաղաքէն. և աս՝ արդիւնք է հազարէ աւելի տարիներու բարեպաշտական ուխտաւորական նուէրներու, հնարադիտութեանց և շահեալ բարձր շնորհներու, զորս իմաստուն Պատրիարքներ յաջողած են ձեռք բերել։ Այդ լայնակառոյց հին շէնքն՝ ունի 300է աւելի սենեակ եւ խցեր՝ հին ոճով, ինչպէս 150ի չափ միաբան նոյնպէս հին ոճով։ Վանքին ճակատն ու Պատրիարքարանը պարզ վայելչութիւն մը սնին, իսկ ներսերն ազամո՛ղ և աններդաշնա՛կ ալ են, թէպէտ շատ հաստատուն։

Տալու համար մեր Կ. Պոլսեցիներուն մերձաւոր դադափար մը այդ շէնքին վրայ՝ կը խնդրենք մեր ընթերցողներէն՝ նորէն ի հինն և ի սուրբն օրինակ առնելով՝ աչքի առջև բերել Եէտի Գուլէի Աղգ. Հիւանդանոցին չափ վայր շէնքեր մը՝ յաւելլով յայն անոր գրասենեակին Մեծ-Նոր խանն եւս՝ միմեանցայար ցած ու խիտ սենեակներով։ Վերջին հրապարակին վրայ է Ս. Յակոբայ եկեղեցին, զոր նկարագրեցինք և որուն ձախակողմն է Պոլիսի բո՛ւն պատրիարքական շէնքին կրկնապատիկը քարուկիր գմբէթաւոր Պատրիարքարանն ու դիւան մը ճոխ՝ ճոխապէս չքուած դարդարուած և կահաւորած պատրիարքական պարձանքներու և պատկերներու, դիւանական կաղամածներու ցուցակովութեամբ։ Վանքը բովանդակապէս՝ կամա-

րակապնէրով, ներքնուդիւնէրով, մանուածոյ շաւիղներով իրարու ագուցուած կցկցուած մասերու ամբողջութիւն մըն է՝ հին ու պարզ ճարտարպետութեամբ, որ արաքականէ ու հայականէ լաղադրուած անորակելի բան մըն է։ Աւելի կաղմիկ են նոր վանաթաղերը, և գեղեցիկ է դպրոցը։ Ամբողջ օր մը դարձած եմ Դեղագի նման՝ այդ քարակոհակ բաւիղին մէջ ու չեմ կրցած ելնել այդ խցերի վրայ խցեր արարդըմաններէն, զի «Տարակոյս առնել անդարձ և անծա՛ղ», եկո՛ղ Պատրիարքը, յաջորդող կամ փոխանորդող աթոռակալը, հաճո՛ղ կամ հաճիացեալ ուխտաւորը, թաղ մը, խցեր մը, խաչեր կամ կամարներ մը շինել տուեր կցկցեր ու յիշատակարա՛ն ի վերայ յիշատակարա՛նի ստորէ շէնցուցեր լմնցուցեր է՝ առանց նայելու հանրական չափակցութեան։ Կամարահիմէր տեսայ, որ երկու մէգրոյ ստուարութիւն ունէին. ասոնք են որ վե՛ր կը բռնեն մինչեւ 3—400 տարուան մեծ մեծ քարերն ու թաղերը։ Հռչակաւոր Եաղուպ ամիրայի անունով երկու միջինդարեան սենեակներ կան, զոր Գեր. դարպասընկալը վարպետ պատկառանքով մը կը համեմէ և կը հրամցունէ հարուստ ուխտաւորներուն։ Նոյն համեմներով պանծացուց ինծի ալ՝ պարոն—Տէր թաղը, զոր շինած է երանելի Գրիգոր պարոն—Տէր Պատրիարքը։ Կոկիկ ու հաստատուն են նաեւ Չամ-թաղն ու Պահճէ-թաղը։ Ամբողջ վանքին վրայ հարթ ճեմեկավայր է, ուրկէ կը դիտուին ընդարձակ հորիզոնէն ամբողջ Երուսաղէմն ու շրջակայքը՝ արեւելքէն մինչեւ Մովսրու հպարտ լեռներն հեռաւոր, դրացի ձիթենեաց խրոխտ լեռը, ու արեւմտեան հիւսիսէն մինչեւ Բեթղէհէմ եւ շրջակայքը։ Այդ ճեմեկավայրը կը ծառայէ նաեւ իբրեւ ընդունարան եւ անցարան անձրեւի ջուրերուն յատուկ ջրամբարներու մէջ, որ 40—50ի կը հասնին եւ վանքին ջրային հարստութիւնը կը կաղմուն՝ իբրեւ միակն այդ անջրդի քաղաքին մէջ։ Վանքն յատկապէս բացած է երկու յարկակից դպրոց ալ՝ քաղաքացի ուստրերու եւ դուստրերու համար։ Ունի դարձեալ իրեն կից գէղ մը քարուկիր տուներ, զորս գրեթէ բովանդակ ձրի ընակութեան տուած է քաղաքացիներուն՝ այսպէս սահմանեալ վաղուց հետէ։

ԵՐԵ ԼԱՐՍ Կ'ԵԼԼԱՆ...

Օր. Ն. Խ...ի եւ Պրն Յ. Փ...ի ամուս-
նութեան առիթիւ գրուած:

Կոկոնները ծաղիկ կ'ըլլան, թրթուրները՝ թիթեռնիկ,
Օրէնք մ'է այս աստուածային, օրէնք վսեմ, գեղեցիկ, —
Վշտին ժպիտ կը յաջորդէ և խաւարին արշալոյս,
Ահա՛ ինչու չեմ զարմանար երբ հարս կ'ըլլայ ամէն կոյս:

Ամուսնութիւն, ինչ աղուոր բառ որ սրտերը կը յուզէ,
Հարս մը անա, պուպրիկի պէս, հագուած ամբողջ բեհեզէ,
Թելեր ունի գլխին վրայ և փետին քով կ'այլայլի,
Եւ պսակին տակ կը դողայ, օբոս քրեմի քօ փուլի: (*)

Ճերմակներու մէջ թաթխուած այդ աղջիկը գեղանի,
Որ նոր բացուած, ցօղը վրան, գամէլիայի նմանի.
Գողին ետեւ կը շփոթի, կը կարմրի և կուլայ,
Զի երէկ կոյս, այսօր կին, վազն ալ մայրիկ պիտ' ըլլայ:

Յոյսը հիմա ցուքեր կուտայ իր կուսագեղ ճակատին,
Փոթորիկ կայ կարծես մէջը թիք—թաք զարնող այդ կուրծքին,
Որովհետեւ քիչ մը առաջ յեկեղեցւոյ ի գաւիթ,
«Երկու մարմին մէկ պիտ' ըլլան» կարծեմ ըսաւ... Տէր Դաւիթ:

Նոր հարսը կը հասկայ թէ պաշիկով մը կաթողին,
Փետին ընծայ պէտք է ընէ իր փափկասուն կոյս հոգին,
Եւ գաղանիքը այդ խորհուրդին—խօսքը մնայ թող մեր մէջ—
Գոյներ կուտայ իր այտերուն և սրտին ալ ելեւէջ:

Ես ալ այսպէս տեսնել կուղեմ երբ աղջիկներ հարս կ'ըլլան,
Եւ կը հագնին ճերմակ րօպան, անդուս, մետաքս, օթթօման,
Կը բաւէ որ մէկուն սիրտը միւսին սրտին յարմարի
Խնդիր չէ թէ հարսը ինչուի նուարդ, Ալիս, կամ Մարի:

Հարսի նման բան մը չիկայ, սրտի հաճոյք պատճառով,
Նարնջենույ ծաղիկ անի իբրեւ մանեակ, իբրեւ օղ,
Խորհրդաւոր այդ ծաղիկէն ծնրակապեր ունի զոյգ,
Որ շատ կ'արժեն իբրեւ symbole, սակայն ոչինչ իբրեւ գոյք:

Եւ ծնողքը համոյրով մը իր բերանը կը կնքեն,
Եւ հրեշտակներ չող ու ժպիտ ընծայ կուտան երկինքէն,
Աղջիկ մը որ կը կարգուի, հասած կ'ըլլայ փափագին
Երբ մանաւանդ իր օրհնէնքը հետը կուտայ... բաբախի

Զի կայ աղջիկ՝ գէր կամ նիհար որ հարս ըլլալ չ'երազէ
Երբ զոյգ աչքեր ունի աղուոր և չրթունքներ կեռասէ,

(*) Օբոս քրեմի քօ փուլի կը նշանակէ «Ինչպէս թռչունը կը դողայ»:

Տիկին կոչուի կը փափաքի, թէն շատ թարմ. մանկատի,
եւ քեզ կըզգայ երբ կըսուի թէ... Madame reçoit le jeudi:

Հարսնիքին մէջ լոյս և նուազ, գինի, champagne, երգ ու պար.
Երկսեւ զոյգեր, առանց վախի կը ֆըլիթեն խօլաբար,
Սակայն հարսը ա'լ յոգնած է և կը տենջայ նա լսել
փեսին բերնէն քաղցրահնչիւն երկու բառեր—Enfin seul!

Խորհրդաւոր է այդ վայրկեան. քիչ մը ետքը միասին՝
Պիտի երգեն իրենց սիրոյն do, rê, mi, fa, sol, la, siu.
Հարսը փեսին պիտի փարի բոլոր մարմնով և ամուր,
Ականջն ի վար պիտի ըսէ—Rien n'est plus doux que l'amour:

Փեսին խելքը կ'երթայ գլխէն և ձեռքերը կը կորզեն
Խելացնոր հապճեպով մը հարսին նոս-նոր... cache — corsetu.
Հոգը չէ թէ նուրբ և սիրուն այդ մեռաքսի կտորին,
Ափով ստակ առած ըլլան, Բռնօրիւն, Վխորին:

Ասկէ անդին ա'չ չեմ երթար, անշուշտ դուք ալ չէք ներեր,
Ո'վ փափկասուն դուք Օրիորդք և դուք ազնիւ Պարոններ.
Բան մը միայն ինձ կը մնայ. բոլոր սրտով մաղթել հոս,
Հարս ու փեսին երջանկութիւն և ձեզի ալ նոյն տարու:

ԳՐԻԶԱՆԹԻՍ

Ծ. Խ.—Այս գեղեցիկ ոտանաւորը, զոր մեր սրամիտ աշխատակիցը գրած էր վերջերս
Իզմիրի մէջ կատարուած հարսանեկան հանդէսի մը առթիւ, արտասանուեր է Պ. Ղուկաս
Վարպետեանի կողմէ,—հեղինակ և արտասանող ջերմագին շնորհաւորութիւններ ընդունե-
լով՝ բանաստեղծական ճաշակաւոր տարր մը աւելցուցած ըլլալնուն համար երեկոյթին սի-
րուն ժամանցներուն վրայ:

ՎՐԻՊԱԿ.—Լորտ Պայրընի Ուե եւ գեղ քերթուածին մէջ, զոր այնքան ճոխ կերպով
գրաբարի թարգմանած էր Տիգրան Ելքէնճեան՝ Մասիսի նախորդ թիւով, երկու տպագ-
րական սխալներ սպրդած են զորս հարկ կը համարինք ուղղել.—

13րդ տողին մէջ բնութիւն բառը պէտք է կարդալ բնութեան և 33րդ տողին մէջ ի
սնանկութիւն բառը՝ ի սնանկութեան,—սապէս.

Ի նրմա՝ և եթ իցեն.— Մարթի՞ բնութեան ի յայտ ածել...

Յըղճիցն ի կէտ.— ի սնանկութեան մեծի կարծեսլ զինք մեծագանձ:

* * Զիֆթէ-Սարաֆի ձախտագրային Տօւմնեւուն մէջ ալ (Մասիս, էջ 805, Բ. սիւ-
նակ) port — cigare : փախ ըլլայ՝ porte — cigare եւ (էջ 807, Բ. սիւնակ) «իւ ուխտաւորի
սենեակին խորը»՝ իր ախտաւորի սենեակին խորը:

ԱՂԶԿԱՆ ՄԵ ՕՐԱԳԻՐԵՆ ՔԱՂՈՒԱԾ

Կիրակի

Երազեցի:

Մէրը վերլուծելու փորձեր ըրի, չյաջողեցայ:

Ինքզինքս պահ մը անանկ դիրքի մը մէջ դրի, որ պիտի դարմանաս չիտակը: Տկար նկարագիրով մարդերը միշտ «սիրէ՛՛ զիս» կ'ըսեն, չմտածելով որ դիմացիննին դիրքնք չսիրեր բնաւ:

Մէրը, անփոխարինելի սէրը չեմ ճանչնար ես: Չեմ հետաքրքրուիր զիս անտարբեր ձգող անձերով: Կը խնդամ սիրահարներուն վրայ, և չեմ ներեր երբեք մէկուն որ զիս սիրելու անքաղաքավարութիւնը գործէ:

Si tu souffres, fais un poème

Ասոր համար է որ սիրող բանաստեղծները միթիթարութիւն մը կը գտնեն յաճախ, ու տանաւորներու մէջ իրենց բոցեղէն տարփանքն ու հծծող բարեկամութիւնը երգելով, բան մը որուն կը հաւնիմ, քեզի պէս, սիրելի Զարուհիս:

Բանաստեղծներ կան որոնք աղուոր, սիրուն գիւտի մը համար միայն, իրենց ճաշկը, նախընտրութիւնը կ'արատաւորեն:

Ամէնէն խեղական տեսիլքներով, անըրջային բանդադուշանքներով, երեւակայական տարփողումներով ապրող բանաստեղծ մը, չափ անդամ, իրականութեան մէջ, է՛ն աղտոտ, է՛ն գանելիք արարքները կը դործէ, տձև արարածի մը կը հաւնի, չես գիտեր ինչո՞ւ համար:

Կը հարցնեմ, ինչո՞ւ համար:

Եւ այս խորհրդածութիւններով զբաղած ատենս, տարօրինակ ըզձանք մը ունեցայ, փափաքեցայ ունենալ սրուակ մը, որուն մէջ քու նայուածքդ և շունչդ պարփակուած ըլլար, քու թափանցող, գրգռիր նայուածքդ, քու մաքուր, մթնոլորտ շունչդ:

Մթնոլորտս քու շունչովդ կազմուած ըլլար, և լոյսերս և ցոլքերս՝ քու նայուածքներովդ:

Զայնդ բուն իսկ երաժշտութիւնն է. մարմինիդ բո՛յրը զգայի մինակ, աչքերս քենէ՛ զատ ո՛չ ոք տեսնէին, քեզի՛ միայն, ակամայ և անլուծելի տուայտանքներէս խուսափելու համար:

Բայց աս ո՛րքան կը սիրեմ զքեզ, ո՛րքան. Երազանքներէս կրնա՛ս զիս արթնցնել, չարածձի Զարուհիս:

Երկուաբբի

Վստահ եմ որ Թէոֆիլ Կողիէի իրաւունք չպիտի տաս իր սա խօսքին համար.—

La musique est un bruit qui coute cher.

Դիտեմ որ ապուշներ չա՛տ կան՝ փողոցներու թմբուկին ու փողին յափշտակութեամբ ականջ դնող, մինչդեռ միւս կողմէն բուն իսկ երաժշտութիւնը քուելով, որ մարդկային հոգին աղնուացնող, բարձրացնող տարբերէն մէկն է եւ թերեւս առաջինը: Ժան Պէրնար անունով մարդ մը կայ, որ ամէն անգամ Վալքրիի, Լոհէնկրին կամ Թանհաուզէր լսելուն, կը հիւանդանայ, գլխու սարսափելի ցաւեր կ'ունենայ:

Երաժշտութիւնը չհասկնա՛լ... բաւական տարօրինակ է: Մեծ անձնաւորութիւններ կը ճանչնամ որոնք կ'արհամարհեն դաշնակը, օրինակի համար, նախապաշարումէ մը խուլ-ցած, ո՛վ զիտէ:

Ո՛վ որ երաժշտութիւնը չը սիրեր՝ մարդկային զգացումներ չի կրեր իր սիրտին խորը: Քեզի մանրավէպ մը պատմեմ, սիրական բարեկամուհիս, որ թէեւ յայտնած կարծիքներուս հետ ուղղակի յարաբերութիւն չունի, բայց սիրուն է, քանի որ խնդիրը երաժշտութեան եւ մանաւանդ Ռիւպլիթային վրայ է:

Տրէդաի մէջ, անգամ մը, բարեկամներ հաւաքուած էին Ռիւպլիթային իջեւանած մէկ պանդոկը, ուր գիշերը, երաժշտական դեղեցիկ կտորի մը համար երկար վիճաբանութիւններ տեղի ունեցան:

Ռիւպլիթայն դաշնակին առջեւ անցաւ եւ այնքան յուզումով զարկաւ որ չըզգաց թէ երկու երեք անգամ կը կրկնէ միեւնոյն կըտորը:

Այդ պահուն, պանդոկին մանչը մօտեցաւ

եւ վարդապետն, վարդապետը պղտիկ տոնակ մը յանձնեց իրենս։—

«Կը խնդրեմ որ կէս գիշերէն ետքը ա՛յլ դաշնակ չդարնէք, կ'ըսէր նամակը, եւ կ'աղակէ, գոնէ գէ՛շ մի դարնէք...»։

Խնդացին ամէնքն ալ։ Վարպետը դաշնակը դոցեց, յետոյ այցեքարտ մը հանելով գրպանէն, սա տողերը գրեց անմիջապէս։—

«Ներողութիւն, ա՛յլ չպիտի չալեմ...»։

Ռիւպօթայն։

Գարդը դրացուհիին ղրկեց։—մոռցայ ըսելու որ գրացուհիէ մը կուգար այդ վարդապետը տոմսակը։

Խեղճ կինը չէր գիտեր որ պանդոկին հիւրը մեծ երգահան մը, Ռիւպթայնն էր։

ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԷՍՅԱՆ

ԽՐԱՆՔԱՆԱՆ ՆՈՐԵՐ

Պատր. Փոխանորդ Տ. Գարբիէլ եպիսկ. ընկերակցութեամբ Ա. գործակատար Արիս էֆ.ի՝ հինգչաքթի օրը Հայ Հռոմէականաց եւ Յունաց Պատրիարքարանները ինչպէ՜ս նաեւ Պուլկարաց Էկզարքարանը այցելելով, Ս. Ծնունդի տօնը շնորհաւորեց ի դիմաց Ս. Պատրիարք Հօր։

Յաւալի լուր մը հասաւ շաբթուս սկիզբը Սեւանիկէն։ Տեղւոյն Արքունի կալուածոց Տնօրէն և քարափին Կայս. Գօմիսէր Դրիգոր էֆ. Բաշալեան յանկարծամահ եղեր է անցեալ հինգչաքթի գիշեր, սրտի կաթուածի մը հետեւանքով։ Հանգուցեալը 65 տարեկան էր, փեսայ Տատեան Ներսէս պէյի, և Սեւանիկի հայ գաղթականութեան ամենէն ծանօթ գէմքը, երկար ժամանակ ատենապետած ըլլալով մատրան Հոգաբարձութեան։ Յուղարկաւորութիւնը կատարուեր է արժանաւոր հանդիսաւորութեամբ։

Գրաւոր քաղաքի մրցման մէջ, Ա. մրցանակը չահած էին, ինչպէս յայտնի է, Տ. Մուշեղ և Տ. Բաքէն վարդապետները որոնց միջեւ հաւասարապէս բաժնուեցաւ 500 ֆր.ի գումար մը՝ Յ. Իզմիրեանց Դրական Յանձնաժողովին և Ս. Պատրիարք Հօր կարգադ-

րութեամբ։ Ասոնցմէ անմիջապէս ետքը զընահատուած և մրցանակի արժանի գատուած ըլլալով Տ. Մեսրոպ Վրդ. Նորոյեանի (Մաւթի «Հարմակ») և Տ. Թորգոմ Վրպ. Գուշակեանի քարոզները, անոնց յատկացուած մրցանակի գումարները շաբթուս մէջ Պատրիարքարանէն Արմաշ ղրկուեցան։

Տ. Ամբրոսիոս Վրդ. Ռուբինեան վախճանեցաւ Ս. Փրկչի Հիւանդանոցին մէջ ուր պատասպարուած էր երկար ատենէ ի վեր և հիւանդ կը տառապէր։

Անաստուի երկաթուղւոյ ընկերութեան Կեդր. Տնօրէնութիւնը՝ գնահատելով իր քարտուղարներէն Անտօն էֆ. Թարադի արժանիքը ու կարողութիւնը, Ընդհանուր Գարտուղարութեան պաշտօնին բարձրացուցեր է զայն։ Կը խնդակցինք Թարաքեան էֆ.ի այս յառաջացմանը, որ արդիւնք է իր աշխատասիրութեանը ու ձեռնհասութեանը, որով՝ իբր պարզ գրագիր մը ընդունուած առաջին անգամ՝ Ընկերութեան Տնօրէն Պ. Հիւկնէնի անձնական քարտուղարը եղած էր քիչ ժամանակի մէջ և այժմ կը կոչուի Ընդհ. Գարտուղարի կարեւորագոյն պաշտօնին։ Ամէն անոնք որ այցելած ըլլալով Անատուի երկաթուղւոյ Ընկ. կեդրոնական գրասենեակները, ի Հայտար-փաշա, առիթ ունեցած են տեսակցելու Անտօն էֆ. Թարադի հետ, լաւ յիշատակ մը պահած են անոր բարեհամբոյր վարմունքէն և ազնիւ ընթացքէն։

Ռօսոսթոյի աղգայինները խնդրած են Պատրիարքարանէ, որ Ծնունդի տօներուն առթիւ Տ. Մուշեղ Վրդ. իրենց առժամեայ քարոզիչ կարգուի։

Հարսանեկան հանդէս. — Երկուշաբթի օրը, Գուրուչէշմէի եկեղեցւոյն մէջ կատարուեցաւ՝ ծանօթ վաստաբան և Գաղ. Ժողովի անդամ Մկրտիչ էֆ. Ասասեանի պսակադրութիւնը Օր. Յուլիանէ Կիւմիւշճեանի հետ, կնքահայրութեամբ Յարութիւն էֆ. Ասլանեանի։ Տ. Գրիգորիս արքեպիսկ. նախագահեց արարողութեան, որմէ ետքը երկսեռ հրաւիրեալները առաջնորդուեցան Կիւմիւշճեան Գաղիէլ էֆ ի բնակարանը ուր շնորհաւորութիւններ ուղղուեցան Տ. և Տիկին Ասասեանի։

ԲԱՍՔՈՒՍԼԱ ԻՎԱՆՕՎԻՉ

6.

(Pasquale Ivanovitch)

Դրեց. Ռիէն-ԼՕթի.

Թարգմ. ՉիՖթէ-ՍԱՐԱՅ.

Տակաւին վարդեր կը յամենան Պողիչի հիւղերուն պարտիզակներուն մէջ, թաղթեր՝ ծառերուն մէջ, յետին քոսենիներ ու մրտենիի ծաղիկներ՝ ծակուծուկ տեղուանք՝ արեւին դէմ։ Միշտ նոր, աղուոր դաղջ օրեր՝ որոնք աշնանավերջի անբայատրելի մեղամաղձութիւնը կը թորեն. նորէն պայծառ ու կապոյտ երկինք մը, որ աւելի դժգունած, կը կամարանայ անտառակներուն զեղնած տերեւներուն վերեւը։

Այսօր, Բասքուաւաին հետ, առաջին անգամը ըլլալով մտայ իր ծերուկ տէրերուն հիւղակին մէջ, երբ անոնք դաշտ էին դացած։

Անոնց խրճիթը այնչափ տարւոք է ու այնչափ մամռապատ, որչափ այն ժայռը՝ որուն հպած է։ Լոյսը՝ կաղձիներուն ոտտէ ոտտայնէն մաղուելով ու կանչընալով կը հասնի հոն։ Ներսը, ցած, մութ, և երկու կամ երեք դարերու մութէն սեցած է։ Հոտ անցեալի չեմ գիտեր ինչ հմայք մը կը լըծորդուի աղքատութեան ու վայրենիութեան տեսարաններու։

Խորը, թանկազին բաներ կը փայլիլին քարէ պատերուն վրայ. բնակարանին պաշտպան սուրբերուն պատկերներն են անոնք։ Սուրբերը, ատոնց մէջ, պիրկ կեցուածքներ, ժամանակին ազդեցութեանը տակ մրոտած դէմքեր, և տարտամ ու խորհրդապահ արտայայտութիւններ ունին. ծնունդ և ուռեցում արծաթէ կտորներով են զգեստաւորուած և նմանապէս արծաթէ, հին կանթեղ մը, առկալ կը մնայ անոնց առջին։ Անոնց տակօքը կախուած են կայծքարաւոր երկու հրացաններ՝ որոնք սատափէ բուններ և հրաշարուեստօրէն տամասքինուած փողեր ունին։

Արդարեւ, ադ է միայն, իրենց լեռներուն

մէջ նախնական ու անտաշ մնացած բոլոր այդ Սլաւներուն սիրելական զարդարանքը. չողոզուն զէնքեր ու փայլալառ իքօններ՝ արտակարգ թշուառութեան մը մէջտեղը։

Իշիկունները հիմա, ալ ցուրտ կ'ընէ կոր։ Մութը կոխելէն ետքը, երբ ցամաք կը վերադառնամ, ա'լ ոչ մէկ լոյս կը սլսլայ դէպքէն դուրս տեղ մը. այդ մթութեան մէջ, այդ անտառակներուն ստորտը՝ ուր ամէն բան սև է, չես գիտեր ուրտեղէն մօտենալ։

Պողիչի պանդոկին մէջ, միշտ կան որթածիւղերու խարոյկներ՝ որոնց առջև կուգան տաքնալու։ Բայց վերը, ձիթենիներու ցանկափակին մէջ, նոյեմբերի խոնաւ մառախուղները ու գիշերին կծու ցուրտը կուգան սառեցնել մեզ, արմատներով կազմուած մեր բարձրերուն վրայ. լուսինը որ դանդաղօրէն կ'անցնի, մեր գլուխին վերեւէն և տերեւ ուտներուն նրբածիր գծադրութիւններուն մէջէն, զգեցած է արդէն ձմեռնային լուսիններու դալուկը, գիծերու ու գոյնի խոտութիւնը. և հեռուն Մօնթէնէկրօի վրայ խոյացող ձիւնի մրրիկները, արդէն իսկ ձեփ ձերմակ ներկած են բարձրաբերձ գագաթները։

Միսմինակ ըլլալ գիշերը, բովանդակ չըքեղութեանը մէջ այդ բնութեան, մէկտեղ մօլ, միեւնոյն վերարկուն ու ծածկոցին մէջը պլուած, այդ անտառակներուն մթութեանը ու լուսութեանը մէջ, տպաւորութիւններ են, որոնք անմասօթ էին ինծի մինչև այն ատեն։ Ալ հիմա, գիշերները հմայք մը ունին զոր անկարելի է ինձ արտայայտել...

Ճ.Զ.

Կիրակի, 28 նոյեմբեր։—Արդէն իսկ բացերն ենք ծովուն...

Իրիկուն է և ցամաքը տակաւ կ'անհետանայ. մթութենէն եզծուած հեռաւորութիւններուն մէջ։ Վերջալոյսի պահուն, Մօնթէնէկրօ որ խոյս կուտար, արեւելեան հո-

րիզոնին մէջ, անհուն վարդապետն հրդեհի մը պէս կ'երեւար, և շատ չանցած ամէն բան մշտնջենապէս մարեցաւ, ջնջուեցաւ աչքերուս առջեւէն:

Այլ եկաւ վերջը... վերջ՝ Պօղիչի լերան. վերջ՝ Սլուռներու այս երկիրին ուր ա'լ պիտի չիգամ բնաւ. վերջ՝ Բասքուալաի սիրոյն...

Երէկ գիշեր, վերը, ձիթենիներուն մէջ իրմէն բաժնուելէս ետքը, նորէն իջայ ծովափ՝ ուր մակոյկս, ըստ սովորութեան, կըսպասէր ինծի: Նաւագնները լապտերին շուրջը պար դառնալու վրայ էին. գիշերային նշաններով հրաման եկած էր՝ Լը Թեմեռերին որ հետեւեալ օրը կէս օրին, ճամբայ ելլայ Հիւսիսի ծովերը վերադառնալու համար. ու խօլ հրճուանքով մը կիմացնէին ինծի այդ բանը:

Ի՞նչ ընել... Ատենը ուշ էր. և անկարելի վեր ելլալ նորէն: Եւ յետոյ, Բասքուալա, իր հիւղակին մէջը փակուած ըլլալու էր հիւսիս, հովուհիի իր պղտիկ մահճակալին վերայ պառկած, քնացած...

Այս առտու, կիրակի, նշանացի նոր հրահանգ եկաւ ծովակալէն. մեկնումը փութացուցուած է և Լը Թեմեռեր պէտք է ժամը ութին ճամբայ իյնայ:

Արեւածագէն առաջ կ'ելլամ. հրամանատարէն արտօնութիւն կ'առնեմ մակոյկ մը առնելու և ցամաք ելլալու համար, պայմանով որ կէս ժամէն աւելի չիկենամ հոն:

Արեւը հաղիւ կ'երեւայ, երբ ես Պօղիչի ծովեզերքը կը հասնիմ: Առտուն օդը ցուրտ է ու մաքուր: Հովիտներուն խորը միայն աշնային ձերմակ թեթեւ մշուշներու թեւածիլը կը տեսնուի: Վերը, լեռնակատարներուն վրայ, ձիւները կը փայլին: Գետինը, չոր ցած տերեւներու կապերտին վրայէն կը քալենք:

Ծովանի ծովեզերքն է արդէն. ջուրը կիջեցնէ իր նաւը և առագաստը կարգի կը դնէ Բիզանո երթալու համար: Անցած ատենս, ինծի կը նայի իր գորշգոյն, արհամարհոտ ու տրտում նայուածքովը: Մինչդեռ ես, սիրով պիտի ուզէի սեղմիլ իր ձեռքը, եթէ սակայն համարձակէի՝ մօտենալ իրեն: Կը տեսնայ վազելով երթալս, այն արահետէն վեր, որ իր

քրոջը հիւղակին կը յանգի և կասկածանքով ետեւէս կը նայի ուշադիր: Ես կը վազեմ, կը ցատքբերեմ քարերուն վրայէն ու այդ արահետին մէջէն՝ ուր խոտերը, մրտենիները, խխում եղած են առտուան ցօղին տակ:

Բայց հոն վերը, հիւղակը դատարկ է: Երկու ծերունիները արդէն իսկ դաշտ դացած են, և Բասքուալա, ինչ աւելի վաղադարձոյց, իր ոչխարներուն ու այծերուն դացած է արդէն չեմ գիտեր ո՛ւր:

Ժամանակը կ'անցնի: Յանկարծ անձկութիւն մը կը պատէ հողիս — սիրտի անակընկալ սեղմում մը, — երբ կը խորհիմ որ պէտք պիտի ըլլայ ինձ մեկնիլ, առանց զայն տեսնալու, և կըսկսիմ վազել նորէն:

Կը փնտռեմ բոլոր շրջակայ ծակոճուկներուն մէջ ուր սովորաբար կ'արածէ ան իր հօտը: Բայց ոչինչ, ոչ ոք. չաղանակներնեւրուն, կաղնիներուն տակ ամէն բան լուռ ու հանդարտ է. որչափ հեռուները որ կուսկընդրեմ, նորէն չեմ առներ իր այծերուն զանգակիկներուն ձայնը. չորցած տերեւներէն զատ ոչինչ, որոնք մէկզմէկու ետեւէ կը թափթփին մամուռին վրայ:

Բասքուալա՛ կը կանչեմ և պատասխան չի գար: Ապահովաբար, լեռան շատ վերերը դացած ըլլալու է. հոն, այն սարահարթին վրայ թերեւս՝ ուր առատ խոտ կայ...

Ժամանակը անցաւ: Պէտք է ծովեզերք վերադառնալ:

Փափաք կըզգամ, տեսնալու գէթ ձիթենիներու մեր շրջափակը ձև մեղ ընտանի մեծաբերձ այն ծառը՝ որուն տակ, սովորութիւն ըրած էինք իրար գտնալ ամէն գիշեր:

Յորեկ ատեն, բնաւ եկած չէի հոն. խոտը ու մամուռը կոխկտուած ու ձգմուած էին, մարդկային երկու մարմինի տարածութեան չափ տեղի վրայ և տեղ տեղ հողը սկրթած էինք:

Կարծես անասուններ էին եկած այդ ծառին տակ և թապալտկած, զբօսնած էին: — Սարսուռ մը, յիշատակ — սարսուռ մը համակեց զիս, երբ տեսայ ճանկութեամբ այդ հողը, — և անմիջապէս, տեսակ մը խորշումի կամ ամօթխածութեան զգացումով նայուածքս

դարձուցի անկէց.—յետոյ նորէն եկայ հոն և փրցնելով հետս տարի թաղթի պղտիկ ծաղիկ մը որ բուսած էր արմատներուն մէջ, այն տեղը իսկ՝ ուր մենք կը հանգչեցնէինք մեր զլուխները:

Ծովափին վրայ, հիմա բազմութիւն կայ:—Մակոյկիս նաւազները ժամանակ գտեր էին պանդոկին բնակիչները արթնցնելու և մեր մեկնումին լուրը տարածելու:

Շրջակայ հիւ զտներու բարի բնակիչները եկած էին ի՛նչի հրաժեշտ տալու և խաղերէն լեզուով՝ ծառաս կը հարցուփորձէին մեր երթալիք տեղին վրայ:

Արեւը մեղմօրէն կըսկսէր բարձրանալ, պայծառ երկինքին երեսը նշուէլով:

Հոն էր կրէկորիօ Եօփօրիչը, որ Ալպանական հինաւուրց հրացան մը նուէր բերած էր ինծի.—հոն էր նաև Մաթէօն, պատուական մարդը, զոր ամէնէն աւելի կը փափաքէի տեսնալ և որուն պէտք ունէի կարեւոր գործի մը համար:—Իրեն յանձնեցի Քաթարօի կարմիր մետաքսէ պղտիկ քսակ մը, մէջը քանի մը ոսկիով և ըսի. «Բասքուալան համար է.—չո՛ւտ, գնա վեր, զինքը դտիր և ըսէ որ կ'երթամ կոր...»:

Տեղացի ծոնօթ մըն ալ եկաւ, և շքոտրական յիշատակի առարկայ մը նուիրեց ինծի:

Ուշ մնացած էի. մակոյկս քչել տուի և Պօզիչի ծովափը խոյս տուաւ քովէս, յաւիտենապէս:

Հեռուէն, լսեցի տեղացիին ձայնը որ կը գոչէր ետեւէս. «Ալլահ սէլամէթ վէրսին»: Եւ թրքական գերագոյն այս հրամեշտի եղանակը զոր լսած չունէի Սթամպուլէն մեկնելէս ի վեր: քաղցր ու մեղամաղձիկ հնչեց ականջիս, անցեալին մէջէն, հեռաւոր կոչի մը պէս...

ԺԷ.

Նաւուն վրայ ինչպէս միշտ, այս անգամ ալ պատրաստութիւնները երկար տեւեցին: Ժամը տասնին հաղիւ կրցան կրակները վառել:

Բայց Լը Թեմեռեթի և ցամաքին միջև հաղորդակցութիւնը արդիւրեւած էր. և ես,

հեռուէն կը դիտէի ծովեզերքը. Պօզիչի գիւղը՝ ուրկից վերջին պահուն, ճամբորդութեան պաշարներով բեռնաւորուած նաւակներ կուգային. տեղացիներ անոնց մէջ լեցուցած էին պտուղ, բանջարեղէն, թռչուն, ձուկ և ուրիշ ինչ որ կարելի է ծախել նաւաստիներուն:

Կէս օրին մօտ էր: Նաւակ մը՝ զոր ձօվանիներ կարծեցի, ճամբայ ելաւ ծովափէն և սկսաւ դէպ ի մեղի գալ:—Այդ նաւակին մէջ, նստած կնիկ մըն ալ կ'երեւար.—Բասքուալա իր եղբօրը նստակով... Ի՞նչ կ'ուզէին ինչ այդ երկուքը... Առանց հասկնալընալու կը դիտէի անոնց զտը:

Կը հասնէին, հիմա մեր շտա մօտիկն էին և իրենց յարեւմտեան գորշագոյն աչքերը կը յառէին վրաս, հանդարտութեան ու մեղամաղձութեան միեւնոյն տարօրինակ արտայայտութիւնով: Հիմա կըսկսէի հասկնալ թէ ինչ կուզէին: Զօվանի կը ցուցնէր ինծի կարմիր մետաքսէ քսակը, նշանացի հասկցնելով որ զայն ետ տալու համար եկած էին:

Խարխալ վերցնելու կը պատրաստուէինք և արդէն իսկ պահակ նաւաստիները հրաման ընդունած էին, ոչ ոքի չի թոյլատրել նաւէն ներս մտնալ: Եւ սակայն ես հրաման տալ տուի անոնց, որ ձովանին թոյլատրեն ներս մտնալու և զայն իմ սենեակս առաջնորդեն. Մաթէօ նաւուն մէջն էր արդէն և ես խորհուրդ մը յղացած էի, զոր ոտքի վրայ երկու խօսքով բացատրեցի իրեն:

Զօվանի, ղեկավարներէն մէկուն առաջնորդութիւնով սենեակս հասաւ. վայրենիի զարմացումով մը չորսդին դիտելով, քսակը անկողնիս վրայ նետեց.

—Շատ աղէկ, ըսի իրեն. քանի որ չէք ուղեր, ետ կառնեմ: Բայց կէցէ՛ք հոտ. ուրիշ ըսելիք ունիմ ձեզի:

Եւ դուրս ելայ, այնչափ ատեն որչափ պէտք էր քսակը նետելու համար Մաթէօին, որ խլեց զայն և անյայտացաւ:

Զօվանիին իմ կենդանագիրս տուի, ինչպէս նաև Քասթէլնուօլօէն գնած մէկ իքօնս, ոսկեղօծ չրջանակով սրբուհիի դէմք մը:

Այս անգամ սիրով ընդունեց և խոստա-

ցաւ այդ երկու պատկերները Բասքուալին յանձնել: Յետոյ, ձեռքս կարկառեցի իրեն, զոր յայտնի վարանքով առաւ իր ձեռքին մէջը և զոր սակայն սեղմեց երթաւ—բարով ըսելով:

Խարխալելով վերցնելու վրայ էին: Պօզիլի յետին նաւակները, երկիրին վերջին բնակիչները հեռու քշուելու վրայ էին: Ամէն բան տակնուվրայ էր: Մեկնումներու սովորական թոհ ու բռն էր, մեքենային ներքնախոր ժըխորը, նաւուղական հրամանները, և սուր սոյլերը:

Սիրտս անհանգիստ էր Բասքուալին համար, որովհետեւ գիտէի որ միս մինակ էր իր նաւակին մէջ, առանց եղբօրը նեցուկին: Խեղճս կը դառնար զայն ինծի այնչափ մօտիկ զգալով. շոնդալից բովանդակ այս գլորդիւնը սիրտս կը սեղմէր:

Եւ սակայն, ուշ մնացած էի առաքատներու պարզումին ներկայ ըլլալու համար ու անմիջապէս առաջակողմի բարձրաւանդակին վրայ, պաշտօնիս փութացի:

Վայրկեան մը վերջը, ինէ վար, իրենց նաւակին մէջ տեսայ երկուքն ալ, նաւուն ցռուկին դպնալու աստիճան մօտեցած: Անխոհմարար առաջացած էին չափազանց և ձօվանի նորէն ինծի կ'երկնցնէր անիծեալ պղտիկ, կարմիր այդ քսակը՝ որ հակառակ իր կամքին, նորէն իր ձեռքին մէջ էր ինկեր:

Բայց ալ շատ ուշ էր, և ամէն մարդ կը պօռար իրենց որ հեռանան մեր քովէն: Զերմակ խուրձ մը ժայթքեց վրանին: Ահեղ մեքենան սկսած էր շարժիլ և իրենք վախ կը զգային...

Կարմիր քսակը ինկաւ ձօվանիի ձեռքերէն, Բասքուալի ծուկներուն վրայ: Ոսկիները, բռնի, անորը եղած էին:

Այն ասան համբոյր մը նսեցի այդ նաւակին կողմը: Բարեբաղդաբար, ցռակայմին քովը կեցած երկու քաջարի նաւաղներ միայն տեսան, անմտած, ակամայ այդ համբոյրը, որուն մէջ հողիէս մաս մը խտացած կար թերեւս:

Բասքուալ զլուխը ծռեց, ձօվանի իր

կարմիր գտակը հանեց ու բարեւեց... Լը Թեմեռէր կը դղրդէր ու կ'առաջանար...

Պօզիլի խարխալելէն մինչև Մէլինեալի ծովածոցը, լսելի կ'ըլլային, մեր մեկնումը բարեւոյ եւրոպեան նաւախումբին փողերգութիւնները ու համաթունդ հրետաձգութիւնները՝ որոնք կ'անդրադառնային լեռներուն մէջ:

Եւ իրենց նաւակին մէջէն, դեռ երկար ատեն երեւցան անոնք երկուքն ալ, կապոյտ ջուրին վրայ ձերմակ ու կարմիր երկու կէտերու պէս:

Եւ յետոյ, Սլաւներու այդ խոր ծովախորը զոր ա'լ բնաւ տեսնալիք չունիմ, գոցուեցաւ իր լեռներուն ետեւը: Ամէն բան վերջացաւ...

Ու հիմա իրիկնալու վրայ է և մենք ծովուն բացերն ենք

Վ Ե Ր Զ

Ա Պ Ա Ն Ո Վ Ա Գ Բ Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Գաւառներու մէջ Ապահովագրական ընկերութեանց գործառնութիւններու վրայ խօսող նամակէ մը, — զոր ամբողջութեամբ չենք կրնար հրատարակել իր ընդարձակութեանը պատճառով, — կը տեղեկանանք թէ Ֆեմիքս Օբրեքիէն ընկերութիւնն ալ, Իւնիօնին և ուրիշ պատուաւոր ընկերութեանց պէս, ժամանակին ամբողջապէս վճարեր է Էսկի-Շէհիրի վերջին հրդեհէն իր ապահովագրած շէնքերուն ու ապրանքներուն արժէքը, մօտաւորապէս 1000 օսմ. ոսկի: Նամակադիրը գոհութեամբ կը յիշէ այս առթիւ, թէ անկէ առաջ ալ՝ Սամսոնի մէջ պատահած հրդեհի մը հետեւանօք՝ իսկոյն այդ տեղ փութացեր է նոյն ընկերութեան ներկայացուցիչը և երկու օրուան մէջ վճարեր է այրի Տիկին Կ. Մանուկեանի կրած ամբողջ վնասը:

Այս առթիւ, նամակադիրը գովեստով կը յիշէ Ֆեմիքս Օբրեքիէն և Լա Էսթրէյեա ընկերութեանց Թուրքիոյ ընդհ. գործակալ Գ. Ֆէրատեան էֆ. ի ճշդապահութիւնը ու փութկոտութիւնը՝ կատարած ապահովագրութեանց վճարման մասին, թէ՛ ի Կ. Պօլիս և թէ՛ գաւառներու մէջ:

Արսոնաքի Կ. Ս. Իիթիիճեմն

Տպագրութիւն ԱՐԵՒԵՆԻՔ Օրագրի

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ շնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ շնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատուի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար վասնաւոր սակացոյց՝ գեղչեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսալսաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des b n fices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ գումարեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի ՏԵՐԵՆՈՒՍԻՈՆ

Պոլիս, Սուլթան Համալ, Բասաժ Քաթրէն Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Ինայէթ Խան: — Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԿԻՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուշաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեպտանտտան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զրաւեան արաւքման

Պալպալեան ամէն օր ակոյալի ամէն տեսակ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան ո եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու չինած ակոյաները: Յորեկները ակոյալ քաչել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաչել տուողին կամքէն կախեալ է:

Աղտաներուն ձրի

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արձաթեայ դաւաղաններ եւ այլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ շնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ դընտղներէն՝ 100ին 15 զեղչով:



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԻՆԷ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուքազով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔի վրայ, եւ ՀՐԻՆԷի, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ-ՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵՆԱՌՓՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱՌՈՎ ՈՒՂԵՒՈ-ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՈՌ-րուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած	10,666,667	Ֆրանք
Երաշխաւորութեան գումար աւելի քան	137,300,000	»

Ընկերութեան ապահովագրուողներուն վճարուած դրամա-գլուխ եւ վիստուց հատուցում	282,000,000	»
1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տոկոս	54,000,000	»

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Աղարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա:

ՍՐՄԱՔԷՇԻ ԶՈՒՐ

(ՊԷՅՔՕԶ)

Ա.ԽՈՐԺԱ.ՀԱՄ, ԹԵԹԵՒ ՈՒ ՕԳՏԱԿԱՐ

Սոյն հանրածանօթ աղբիւրին ջուրը, ախորժահամ եւ վճիտ, յանձնարարուած է մայրաքաղաքի ականաւոր բժիշկներուն կողմէ, որոնք անձամբ փորձած են անոր յատկութիւնները: Մասնաւորապէս, քիմիագէտ Պ. Բիէռ Արէոի տարրալուծած է զայն եւ թաշտէլէնի ու Գանլըգաւաքի ջուրերէն գերազանցապէս լաւագոյն դասած է, ստուգելով որ անոր ջրաշարիական աստիճանը ¹⁰ է եւ բնաւ ստամոքսի ծանրութիւն չիտար:

Տեղական հիւանդանոցներէն շատեր, իրենց բժշկապետներուն յանձնարարութեամբ, այս ջուրը կը գործածեն, որ ուղղակի աղբիւրէն կը բերուի ամենայն խնամքով եւ մաքրութեամբ, չիչերը եւ տակառները հոն լեցուելով ու զմոտեւելով:

ՍՐՄԱՔԷՇ ԶՈՒՐին գերընտիր եւ անմրցելի, ըլլալը հաստատած են նաեւ, քիմիագէտ Տօքթ. Մաննիէ դատ. հետեւեալ բժիշկները.

Տօքթ. Տուքա փաշա (ընդհ. քննիչ առողջապահական վարչութեան) Կապուչի, Զէրրի, Սթէքուլի, Ավիչիանօ, Մալլի, Միրապէլ, Բանայօթ պէյ, Պալիտիս, Բարաքօվսքի, Բլէմով, Մօրթման, Տէլլասուտա Ֆայթզ փաշա եւ Սիմօնօֆ:

Վաճառման կեդրոնատեղիներն են՝ ԲԵՐԱ, Մեծ-Փողոց, Հալէպ Խան, Թ. 7:— ՊՈԼԻՍ, Սիրքէճի, Պապը-Ալիի մեծ պողոտային վրայ, Թ. 34 մթերանոցը, ինչպէս նաեւ Շուկային Նուրի Օսմանիյէի դրան կից Թ. 21 խանութը:

Սոյն մթերանոցներուն մէջ կը վաճառուի նաեւ, ՍՐՄԱՔԷՇ ջուրէն դատ, Բարաքօվաքի ջուր: Գիները շատ ատան են՝ ժողովրդեան դիւրամատչելի ըլլալու համար:

Փորձի համար շիջ մը գնեցէք ՍՐՄԱՔԷՇի ջուրէն, եւ այնքան համով ու թեթեւ պիտի գտնէք, որ վստահաբար պիտի գործածէք զայն այսուհետեւ:

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ՏՈՒԹ. ՄԱԼԻՍԵԱՆ

(ՎԿԱՅԵԱԼ ԲԱՐԻՁԷ)

Մ Ա Ս Ն Ա Գ Է Ց

Կանանց հիւանդութեանց, մանկաբարձ, վիրաբոյժ

Բերայի դարմանատունը փոխադրած է՝ Կրկին Բերա Սագըզ Աղան փողոց, թիւ 26, ուր հիւանդներ կ'ընդունին ամէն օր կէս օրէն վերջ ժամը 1—4 (Ը. Ե.):

Ժամադրութեամբ՝ կէս օրէն առաջ:

Կարօտ հիւանդները կը դարմանէ Բերայի (Սր. Երրորդութեան եկեղեցւոյ) Աղքատախնամի դարմանատունը՝ ամէն հինգշաբթի՝ առաւօտէն մինչեւ կէս օր:

Ծանօթ. — Վիրաբուժական, ուղղաւորական (orthopédique), ծննդաբերական եւ ամէն կերպ արգանդի հիւանդութեանց շատ կարեւոր գործողութիւնները ենթակներու տուններուն մէջ՝ կատարեալ ապահովութեամբ եւ մեծ յաջողութեամբ կարենալ կատարելու համար՝ գիտական ամենավերջին մեթոտներու համապատասխանող կատարելագործեալ գործիքներու մանրամասն ամբողջութիւնը հագացուած է:

ԿԱՐԱՊԵՏ. ԷՅ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ Թարգմանած գիրքերէն հետեւեալները կը գրտնուին Պաղտատեան գրատունը եւ մայրաքաղաքի միւս հայ գրավաճառներուն քով:

	հասոր	դր
Կարմիր մարդոց երդումը	2	10
Ընտանեգուրկ	2	12
Փարիզի ամուսնութիւնները	1	5
Թափառական Հրեայ	4	50
Արուարձանին տղան	3	15
Հանրակառքին ոճիրը	1	5
Սկզբունք Բաղ. Տանեսութեան	1	4
Ընտանեկան գողտիքներ	3	15

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ Թ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Հեռագր. Հասցե՝ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ — ԿԻՐԱՍՈՆ Գնում եւ վաճառում, ներածում և արտածում ի հաշիւ:

Բացարձակ պայման՝ ԿԱՆԽԻԿ:

Յանձնառողչէքը պիտի գնահատէ յաճախորդը: Կրկնապատիկ կը տուի ո՛ր եւ է վնաս, որ արդիւնք ըլլայ դարձակալութեան անհոգութեանը: Հրապարակի մասին պահանջուած ծանօթութիւնք փութով կը ղրկուին, եթէ 1 շաբ. նոց փուլ ներփակուի: Յայտագիրը կը ղրկուի պահանջողներուն: Դիմողը երբեք չի վնասուիր. ընդհակառակը:

Յ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ր

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1904 ՏԱՐԻՈՅ ՀԱՄԱՐ

(AGENDA INTERNATIONAL)

Թուրքերէն, Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն լեզուներով

Յառաջիկայ 1904 տարւոյ համար՝ նախորդ տարիներէն աւելի ճոխ և աւելի խնամով պատրաստուած և արդէն հրատարակուած է

Պարզ լաթակազմ	3	դր.	{ 25 օրինակէն աւելի գնողներուն զոհացոյց գեղջ
Ընկիր լաթակազմ	5	»	
ՈՍԿԵԶՈՐ ՓԱՌԱԿԱԶՄ	8	»	

Կը գտնուի Պոլսոյ եւ գաւառաց բոլոր գրավաճառներու եւ քրթավաճառներու քով: Հրատարակիչն է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ,

ՊԱՅՊԼ ՀԱՌԻԶ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՖԵԼԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիճակ)

ՊԱՏՈՒՍԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒՔՍ ԼՈՒԻ ՏԷ ՊԱՎԻԷՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովային արկածներու (ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս, Փոքսի Լիօնէ:

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՅԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հաճօբուլօ խան, Թ. 52—53—54—55—56

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԸՆԴԱ. ՄԵԾ. ՓՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալածա-Սէրայի Լիսէին դ. մ

ԳԵ. ՆԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-

խեն մինչեւ իրիկուան ժ. 11¹/₂

ԲԵ. ԳԵ. ՈՒՐ. օրերը ճեմ մինչեւ 11¹/₂

Երբակի օրերը ժամադրութեամբ

սուրը կը զսնուի, ուր դիմելու են պէտք ունեցողները:—գին 80 դր:

Ամեն վճարում կանխիկ է:

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆ

Թ. 20, Զաւմաքըլար, Կ. Պոլիս

Ամենաճոխ մքերք դպրոցական, գրական, գիտական եւ այլ գրեանց

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆԸ պատիւ ունի յայտարարել իր բազմաթիւ յաճախորդաց թէ ունի հարկ եղած անհրաժեշտ դիւրութիւններ՝ գրեական առէն յաճախարարութիւն գոհացուցիչ պայմաններով կատարելու, ըստ որում իբր գրավաճառական մեծ հաստատութիւն մը արտադրած է վերջին տասը տարիներու մէջ դպրոցական նորանոր դասագրքերու շարք մը եւ այսպէս հիմնական բարեփոխումներ ներմուծած է մեր կրթական հին մեթոտներուն մէջ:

Զերմապէս կը հրաւիրուին Պօլսոյ եւ գաւառաց կրթական վարիչ մարմինները՝ փութով յանձնարարել իրենց դասագրքերն, ի նկատ առնելով գրատոմս ընծայած առաւելութիւններն եւ ամէն բացառիկ պայմաններն:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԵՂԻ ԳՐԱՏԱՆ

Զաւմաքըլար Իլ 64

ԸՆԹԱՅՔ ԸՆԹԵՐՅԻ.—ԴՊՐՈՅԻԳԻՐՔԸ:

Հրատարակուեցաւ Տարր.Ընթ. Բ. տարին, ճոխ պատկերներով ու բազմազան շիւթերով հեղ. Զ. էֆ. Թրոսեանի. գին 4 դր.: Դպրոցի պատ. Տեօրէնք օրինակ յը ձրի կը ստանան, 50 փարայ բօթի ծախք ղրկելով: Ուղղակի Դրատան դիմողներուն կարելու գելչ մը տուի:

Վ. Յ. Յակօբեան Անգղ-Հայ Բառգիրքը որ սպառելու վրայ է, միմիայն յիշեալ գրա-